Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2024 թվականի N -Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև հուլիսի 15-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 435 քաղաքացու, որոնցից 128-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 9-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 298-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:
4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 140 պահեստազորային, որոնցից՝ 40 պահեստազորային՝ 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 9-ը ներառյալ, 100 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 20-ից մինչև հունիսի 13-ը ներառյալ.

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով մինչև 54 պահեստազորային, որոնցից՝ 44 պահեստազորային՝ 2024 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 19-ը ներառյալ, 10 պահեստազորային՝ 2024 թվականի ապրիլի 26-ից մինչև մայիսի 20-ը ներառյալ.

3) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով մինչև 17 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 6-ից մայիսի 30-ը ներառյալ.

4) կապի մասնագիտություններով մինչև 12 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 14-ից մինչև հունիսի 7-ը ներառյալ.

5) հետախուզական մասնագիտություններով մինչև 49 պահեստազորային, որոնցից՝ 14 պահեստազորային՝ 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 9-ը ներառյալ, 17 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 2-ից մայիսի 26-ը ներառյալ, 9 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 3-ից մայիսի 27-ը ներառյալ, 9 պահեստազորային՝ 2024 թվականի հունիսի 3-ից հունիսի 27-ը ներառյալ.

6) անօդաչու թռչող սարքերի մասնագիտություններով մինչև 40 պահեստա-զորային՝ 2024 թվականի մայիսի 7-ից մայիսի 31-ը ներառյալ.

7) ինժեներական մասնագիտություններով մինչև 64 պահեստազորային՝ 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 9-ը ներառյալ,

8) տեխնիկական մասնագիտություններով մինչև 39 պահեստազորային, որոնցից՝ 32 պահեստազորային՝ 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 9-ը ներառյալ, 7 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 13-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ,

9) թիկունքային մասնագիտություններով մինչև 20 պահեստազորային՝ 2024 թվականի մայիսի 6-ից մայիսի 30-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան